

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Է. ՂՈՒԿԱՍՅԱՆ

«Հայագիտությունը Ֆրանսիայում
19-րդ դարում» թեմայի դեկավար, ԵՊՃ

ԷԴՈՒԱՐԴ ԴՅՈՒԼՈՐԵՒ (1807-1882 թթ.)

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Եվրոպայում սկզբնավորվում և զարգանում է հայագիտությունը որպես գիտություն: Հայկական մշակույթի, հայ ժողովրդի պատմության և Հայատանի՝ ժամանակի իրավիճակի նկատմամբ հետաքրքրության պատճառը պատմա-գեղարվեստական մեծարժիվ հուշարձաններն էին ու հայ ժողովրդի հոգևոր հարուստ ժառանգությունը:

Հայագիտության զարգացման գործում առանձնահատուկ դեր ունի Ֆրանսիայի հայագետների դպրոցն իր բազմաթիվ նշանավոր գիտնականներով, որոնք անգնահատելի ավանդ են ներդրել հայ մշակույթի ուսումնասիրման ասպարեզում:

Հայագիտության ֆրանսիական դպրոցի ակնառու դեմքերից է Էդուարդ Դյուլորեն: Նշանավոր գիտնականն ամբողջ գիտակցական կյանքը նվիրել էր արևելագիտական հետազոտություններին, որոնց զգալի մասը հայագիտության խնդիրներն են: Դյուլորեն մեծ վաստակ ունի Ֆրանսիայում հայագիտության վերածննդի և զարգացման գործում: Գիտնականի արևելագիտական գործումնեության սկիզբն առնչվում է եգիպտագիտությանը, իսկ հետո՝ նաև մալայական և հավայական լեզուների ուսումնասիրությանը: Սակայն Դյուլորենի գիտական ուշադրության կենտրոնում էին հատկապես քրիստոնյա Արևելքի ուսումնասիրությանը վերաբերող հարցերը:

Սամուել Մուրադի և Գաբրիել Ալյվագովսկու օգնությամբ նա անցնում է հայերենի խորացված ուսումնասիրությանը: Լավ պատկերացնելով հայկական ձեռագրերի նշանակությունը հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության հարցում, Դյուլորեն զբաղվում է Վենետիկի, Վիեննայի, Փարիզի, Պետերբուրգի, Մոսկվայի մատենադարաններում և գրադարաններում պահպանվող ձեռագրերի ուսումնասիրության, թարգմանության և հրատարակման բարդ ու տքնաշան գործով: Այդ աշխատանքի արդյունքն էր Արևելքի մշակույթի ամենաարժեքավոր հուշարձաններից մեկի՝ Միխայիլ Աստրու «Ժամանակագրության» նախ համարու (1849), իսկ 1868 թ.՝ ամբողջական հրատարակությունը: Քանի որ վերջինիս բնագիրը չի պահպանվել, հայերեն թարգմանությունը, որը կատարվել է 13-րդ դարում, միակ աղբյուրն էր:

Դյուլորեն «Ժամանակագրության» առանձին հատվածները ֆրանսերեն է թարգմանել և կցել ընդարձակ մեկնաբանություններ: Այդ հատվածներում ներկայացված են 523-713 թթ. Ասիայում կատարված իրադարձությունները՝ հեղաշրջումները, պատերազմները, որոնց արդյունքում արարաները նվաճեցին Իրանը, Սիրիան, Հյուսիսային Աֆրիկան և Բյուզանդական կայսրության արևելյան համանգները: Թարգմանության առաջարանում Դյուլորեն գրում է, որ հայերը, գտնվելով միջնադարյան այս նշանավոր իրադարձությունների կենտրոնում, դրանց հիմնական ակնատեսն ու պատմության այդ շրջանի անաշառ նկարագրողն էին:

Դյուլորեն ընդգծում է հայկական սկզբանադրյուրների և հունական ու հոռմեական չպահպանված ձեռագրերի հայերեն թարգմանությունների առանձնակի հավաստիությունը հարևան երկրների, մասնմետական ժողովուրդների պատմության և ճրանց տեղաշարժերի ճշգրիտ նկարագրության հարցում:

Հիմնվերով հայերի՝ հունարեն ձեռագրերի ուսումնասիրության և թարգմանության ժամանակային առաջնության վրա, Դյուլորեն գտնում է, որ ժամանակի չպահպանված բազմաթիվ գրական հուշարձանների հետքերը հարկավոր է փնտրել առաջին հերթին գրաբար թարգմանություններում:

Ներկայացնելով Միխայիլ Աստրուն և Արա երկը, գիտնականը նշում է բնագրի կորատի պարագայում հայերեն թարգմանության բացառիկ նշանակությունը: Դյուլորենի աշխատությունն ավելի են արժեքավորում այս պատմության ֆրանսերեն թարգմանության գիտական ծանոթագրություններում:

«Ժամանակագրության» հրատարակությամբ գիտնականը նախապատրաստեց հայ պատմիչների գրուերի նոր հրատարակությունը՝ ֆրանսերեն զուգարեղ թարգմանությամբ և ծանոթագրությամբ: Նման հրատարակության զաղափարը ծնվել էր 19-րդ դարի սկզբներին, բայց մի շաբթ պատճառներով չէր իրագործվել: Դյուլորեն որոշեց հայ մատենագիրների գլխավոր երկերի ֆրանսերեն թարգմանությունները ի մի հավաքել և հրատարակել, միուսները՝ հատվածաբար հրատարակել՝ պատմական և աշխարհագրական մանրամասն ծանոթագրություններով: Պատմիչների մատենաշար տպագրելու մասին գիտնականի առաջարկը ոգևորությամբ ընդունվեց ոչ միայն Ֆրանսիայի, այլև Եվրոպայի գիտական շրջանակներում, քանի որ պատմական գիտության համար նման շարքի հրատարակությունը բացառիկ կարևոր նշանակություն ուներ և հովանավորվում էր Ալեքսանդր II-ի կողմից:

Դյուլորեն, սակայն, չկարողացավ լրիվ իրագործել իր մտահղացումը:

1859-ին լուս տեսավ 1-ին հատորը՝ Մատթեոս Ռուբալեցու «Ժամանակագրությունը» (952-1136 թթ.), որը շարունակել է Գրիգոր Երեցը մինչև 1162 թ.: Գրքի առաջարանում Դյուլորեն ընդգծում է հայ գրականության ունեցած պատմական մեծ կարևորությունը՝ որպես Արևելքի բոլոր քրիստոնեական գրականություններից ամենահարուստի ու իմբնատիպի: Դյուլորեն ընդգծում է հունական գրականության հետ հայ գրականության ունեցած կապերը դեռևս անտիկ շրջանում, որոնք քրիստոնեության ընդունումից հետո ավելի են սերտամուտ:

Հայ գրականության ինքնատիպությունը Դյուլորեն բացատրում է հակադիր քաղաքակրթությունների միավորմամբ. արևելյան քաղաքակրթությանը Հայաստանը կապված է հնագույն ավանդույթներով և աշխարհագոյական դիրքով, իսկ առևտյան քաղաքակրթության բարոյական և ինտելեկտուալ ոգուն մոտ է թե՛ կրոնական, թե՛ ազգագրական և թե՛ ծագումնաբանական ընթիւնությամբ, քանի որ հայերը պատկանում են հնդեւլորպական ընտանիքին: Գիտնականի կարծիքով, ինչն որանով են պայմանավորված հայ հնդիմակներին հատուկ կուր տրամաբանությունը, լակոնիզմը, բարձր ոճը, գեղեցկությունն ու ճարտասանությունը, որոնց ամենաբարձր դրսերում 5-րդ դարի պատմիներ խորենացու և Եղիշեի գործերն են, որ կարծես հիշեցնում են Հումաստանի և Հոռոմի նշանավոր հուշարձանները:

Խոսելով հայ պատմագրության հետագա ուղու և զարգացման մասին միշնադարում, Դյուլորեն բարձր է գնահատում այդ շրջանի պատմագրությունը, որը հիմնականում ժամանակագրության տեսքով պատմական դեպքերի շարադրանքն է տարի առ տարի: Գիտնականը նշում է այդ ժամանակագրությունների ոճական շեղումները, որոնք արտացոլում են այդ շրջանի լեզվի ընթիւնուր վիճակը, բայց և միաժամանակ ընդգծում դրանցում ներկայացված փաստերի կարևորությունը, քանի որ դրանցից շատերի մասին ոչ մի ուրիշ հիշատակություն չի պահպանվել, իսկ մյուս իրադարձություններն արևելյան պատմիները ներկայացնում են իրենց քաղաքան և կրոնական հայացքներին հարմարեցնելով՝ փաստորեն միանգամայն այլ մեկնաբանությամբ:

Հայկական ձեռագրերի ուսումնասիրության և հրատարակության նախապատրաստման ընթացքում Դյուլորեն բազմաթիվ դժվարություններ հայթահարեց, որոնք վերաբերում էին պատմության ժամանակագրությանը, առանց որի ճշտման հնարավոր չեր մկարագրված պատմական իրադարձությունների մեջ ճիշտ կողմնորոշվել: Այդ գիտակցելով և հայերեն սկզբնաղբյուրների հրատարակման գործին նվիրվելով Դյուլորեն ուսումնասիրեց հայոց տոմարը: Այդ տքնաշան աշխատանքի արդյունքն էր «Հետազոտություններ հայոց ժամանակագրության շուրջ»¹ մոնումենտալ գիրքը՝ տարբեր տոմարների համեմատական հաշվարկային աղյուսակներով: Հայոց տոմարը, որը հայերը կիրառում էին 6-րդ դարի կեսերից, հիմնված էր շարժական տոմարի 1461 տարվա շրջանի վրա՝ տարին 65 օրով: 1461 տարվա այդ շրջանը, որը կազմում է հայոց մեծ դարաշրջանը, համապատասխանում էր հույսն անշարժ օրացուցի 1460 տարիներին:

Դյուլորեն հանգամանորեն ուսումնասիրեց տոմարի վերաբերյալ հնագույն և ժամանակակից աշխատությունները, հավաքեց, դասակարգեց ու մեկնաբանեց փաստական մեծածավալ նյութերը և ցուց տվեց, որ հայոց մեծ թվականության սկիզբը մ.թ. 552 թ. հուլիսի 11-ը էր: Այդ օրվա ճշգրտումը կարևոր էր ոչ միայն Հայաստանի պատմության, այլև Արևելյան կայսրության պատմական իրադարձությունների հայտնաբերության համար:

¹ E. Dulaquier, Recherches sur la chronologie arménienne technique et historique... P., 1859.

յունների, խաչակրաց արշավանքների մասին հայ հեղինակների տված տեղեկությունների ճշգրտման համար:

Հայ պատմիչների մատենաշարը հրատարակելու գիտնականի մտադրությունն անավարտ մնաց և մասսամբ իրականացավ Լանգուայի և Բրուսեի ջանքերով, ոռոճ 1867-1869 և 1874-1876 թվականներին տպագրեցին երկուական հատորներ:

Դյուլուրեն երկար տարիներ ուսումնասիրում էր խաչակրաց արշավանքներին ժամանակակից հայ հեղինակների երկերը, թարգմանում և նախապատրաստում հրատարակությամբ՝ դրանք համարելով կարևոր մասն այդ արշավանքներին նվիրված գրականության: Ինչպես նշում էր նշանավոր արևելագետն Էռնեստ Ռենանը, Եվրոպային, հատկապես Ֆրանսիային սերտորեն կապված Կիլիկիան «ծագեց», առաջացավ խաչակրաց պատերազմների հետևանքով և պատմությանը կտակեց բազմաթիվ կարևորագույն վավերագրեր: Այդ ընթացքում արդեն հրատարակվել էր ֆրանսիացի պատմիչների գործերի ժողովածուն, իսկ հայ պատմիչների երկերին նվիրված հատորներն Ակադեմիան հանձնարարեց Դյուլուրեին: 1869-ին լույս տեսավ հայկական սկզբաղբյուրներն ընդգրկող ժողովածուի 1-ին հատորը²: Գիտնական հրատարակիչն ամեն ինչ արել էր, որպեսզի աշխատանքն արժանի լինի հրատարակող հաստատությանը. գրել էր առաջարան, իսկ հավելվածում շարադրել Կիլիկիայի պատմությունը Լուսինյանների ժամանակաշրջանում, որի վերաբերյալ հայկական սկզբաղբյուրները բավարար չեն:

Հարկ է նշել, որ այդ ժողովածուի հրատարակությունից առաջ, 1861 թվականին, լոյս տեսավ Դյուլուրեի ուսումնասիրությունը Փոքր Հայքի պատմության, քաղաքական և վարչական կառուցվածքի մասին³: Մշխատության մեջ լուսաբանված են Կիլիկիայի փոխհարաբերությունները հարևան պետությունների՝ Կիպրոսի, Եգիպտոսի, Հռոմաստանի, Սիրիայի, Խոտանիայի և Ֆրանսիայի հետ, որի ազդեցությունն այնուել բավականին զգալի էր: Դյուլուրեն Կիլիկիան Հայաստանի պատմությունը դիտարկում է ընդհանուր Հայաստանի և խաչակրաց արշավանքների համապատկերում:

Գիտնականի հետաքրքրությունը Հայաստանի պատմության մկանամբ չեր սահմանափակվում, սակայն, միայն խաչակրաց արշավանքներով: Նրան հետաքրքրում էին նաև մոնղոլական արշավանքները: 1858-1860 թվականներին Դյուլուրեն թարգմանեց և հրատարակեց հատվածներ Կիրակոս Գանձակեցու և Վարդան Արևելցու աշխատություններից՝ «Մոնղոլները հայ պատմիչների տվյալներով» վերնագրով: Առաջարանում խոսելով մոնղոլական արշավանքների երկիրայուրամյա տիրապետության մասին, գիտնականը կրկին նշում է, որ այդ շրջանի հայկական աղբյուրները լրիվ ուսումնասիրված չեն: Նա ընթերցողին ներկայացնում է Գան-

² Խաչակրաց արշավանքների պատմիչների երկերի ժողովածու: Հայկական Այութեր, Փարիզ, Բ. I, 1869 (Բայկեն և Փրամներն ը.):

³ E. Dularier, Etudes sur l' organisation politique, religieuse et administrative du royaume de la Petite Arménie. Paris, 1861.

ձակեցու «Պատմությունը», ինչպես նաև Վարդան պատմիչի կյանքն ու գործունեությունը, նրա հոչակավոր Պատմությունը, որտեղ օգտագործված են ասորական և բյուզանդական բազմաթիվ սկզբնաղբյուրներ: Այն հանգամանքը, որ այդ աղբյուրներից շատերը չեն պահպանվել և ոչ մի այլ հեղինակի կողմից չեն հիշատակվում, Վարդանի «Պատմությանը» հատուկ նշանակություն է տալիս:

Դյուլորնի գիտական հետաքրքրությունների ոլորտը, պատմագրությունից բացի, ընդգրկում էր նաև իր ապրած շրջանը: Սերը Հայաստանի, նրա մշակույթի նկատմամբ, աշխարհական ժողովուրդի ցավը կիսելու ցանկությունը նրան մղեցին ժամանակի հայկական կյանքի ուսումնասիրմանը: 1854 թ. լուս է տեսնում գիտնականի աշխատությունը, որտեղ ներկայացվում են հայ կյանքին և գաղթավայրերին, ազգային մտածողությանը և ազգային բնագրությանը վերաբերող հարցեր:

Քննելով հայ ժողովուրդի պատմության և տարբեր պետությունների կազմում հայտնված հայկական գաղթավայրերի ժամանակի կյանքին վերաբերվող հարցերը, Դյուլորն համեմատում է տարբեր երկրներում ցրված հայերի բնագրության պայմանները:

Պատմության քննությունը Դյուլորնի բերեց այն համոզման, որ գաղութահայությանը բնորոշ առաջին հատկանիշը սերն է և կարուղ Հայաստանի նկատմամբ: Ոչ մի զգացում չի կարող նրանց սրտին ստիճան ավելի արագ բարախել, քան հիշողությունները կորցրած հայունիքից, որի հետ վերջին կազմ ազգային Եկեղեցին է: Հեղինակը հանգամանալից կերպով է գրել նաև Մխիթարյանների գիտական, պատմական, գրական և հրատարակչական լայն գործունեության մասին: Նա Մխիթարյանների հրատարակչական գործունեության հետ է կապում և հայ լրագրության սկզբանավորումն ու ներկայացնում տարբեր երկրներում լուս տեսնող հայկական պարբերականները: Դյուլորնի գրչի տակ հայ վերնախավը ներկայանում է որպես բարոյական և նյութական օժանդակություն ցուց տվող ուժ, որի հայրենասիրությունը չի նահանջում ոչ մի զոհաբերության առաջ՝ հանուն լուսավորության և կրթության:

Դյուլորն գրում է Մխիթարյանների հիմնադրած Ռաֆայելյան և Սամվել Մուրադյան վարժարանների մասին, իսկ Մուսկվայի արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտին նվիրել է մի քանի հոդված, որտեղ մանրամասն պատմում է Լազարյան ընտանիքի և նրանց հիմնադրած ինստիտուտի, նրա նվիրական նպատակի և գործունեության, այդտեղ ուսանած բազմաթիվ անխոնց հետազոտողների, գիտականների, արևելագետների մասին: Կենսագրական ակնարկում և իշխան Խվան Հրդի (Հովհաննես) Լազարյանի մահվան կապակցությամբ գրած հոդվածում Դյուլորն ներկայացնում է նրա ակնառու ծառայությունն արևելագիտությանը, հայ հին հեղինակների գործերի, գիտական աշխատությունների և դասագրքերի հրատարակությունը:

Լուսավորության հարցերը սերտորեն առնչվում են լեզվի հարցերին, որոնցով նույնական հետաքրքրություն էր գիտնականը: Հայոց լեզվուն նենց սկզբից գրավեց նրա

ուշադրությունը, որպես հնագույններից և հնդեվրոպական լեզվանուանիքի, ինչպես այդ ժամանակ կարծվում էր, իրանական ենթաճյուղի ամենալավ պահպանվածներից մեկը: Դյուլորեն համոզված էր, որ հայերենի համեմատությունը հունականի հետ բացահայտում է նրանց զարմանալի նմանությունը, հայերենի ավելի հնագույն ծագումը և մերձավորությունը հնդեվրոպական հախալեզվին:

Իր մեկ ուրիշ աշխատությունում, որը Ավիրված է հայոց հին երգերի և հին Հայաստանի առասպելների ու պահպանությունների վերլուծմանը Մ. Էմինի «Վեպը Բնույն Հայաստանի» գրքում, Դյուլորենը քննում և մեկնարանում է պահպանված ժողովրական երգերն ու առասպելները, որոնք հիշատակում է Խորենացին: Քննարկելով «վեպ, զրոյց, առասպել» բառերի Էմինի մեկնությունը՝ Դյուլորենը փորձում է ճշտել դրանց պարունակած պատմական այն իմաստը, որոնցով դրանք կիրառել է Խորենացին: Նա չի համաձայնում Էմինի այն տեսակետին, թե հայերը ունեցել են հնագույն էպոս «Օսի-Նամե»-ի նման, քանի որ անհավանական է համարում, որ Խորենացին, եթե անզամ էպոսը չի հասել նրա ապրած ժամանակները, չիմանարդար դրա գոյության մասին:

Հայագիտության առանձին հարցերի վերաբերյալ ունեցած տարրեր կարծիք-աերը, անշուշտ, չեմ ազդում երկու գիտնականների փոխադարձ հարգանքի վրա: Եվ Դյուլորեն, բարձր գնահատելով Էմինի աշխատանքը, այն արժանի է համարում եւրոպական գիտական հասարակայնության ուշադրությանը: Իսկ Դյուլորենի աշխատությունն օրինակ է հայ հին գրականության բարդ հարցերից մեկի, որը երկար ժամանակ գիտնականների ուշադրությունից դուրս էր, խոր, շահագոյն ուսումնասիրության, ինչպես նաև լուրջ, անաշառ բանավեճի՝ գիտական ճշմարտությունը վեր հանելու:

Կյանքի վերջին տարիներին Դյուլորեն հրատարակության էր պատրաստում Ստեփանոս Տարոնացու (Ասողիկի) «Տիեզերական պատմության» ֆրանսերեն թարգմանությունը: Գրքի առաջին երկու մասերն արդեն պատրաստ էին, բայց լույս տեսան միայն 1883-ին, նրա մահից մեկ տարի անց: Գիտական ծանոթագրությունները վկայում են գիտնականի խոր գիտելիքների, վարպետության և մասնագիտական հմտության մասին: Հետագայում աշխատանքը շարունակեց մեկ ուրիշ նշանավոր հայագեն՝ Օգյուստ Կարլերը, որը հրատարակության պատրաստեց գրքի 3-րդ և 4-րդ մասերը:

Իր կյանքի ընթացքում Դյուլորեն զբաղվեց հայագիտությանը վերաբերող բազմաբնույթ հարցերով: Գիտնականի հետաքրքրությունների մեջ հիենց արժանի տեղն ունեին Հայաստանի պատմությունը, աշխարհագրությունը, տնտեսական և քաղաքական իրավիճակը, ժամանակի հայ հասարակության, հայոց լեզվի և գրականության, հայ հոգևոր և հասարակական կյանքի հարցերը: Դյուլորեն հաջողությամբ համարում էր գիտական և մամլավարժական գործունեությունը: Նա երկար տարիներ դասավանդում էր, իսկ 1862-ին, Լևայան դը Ֆլորիվալի մամից հետո, միաձայն ընտրվեց Արևելագիտության բարձրագույն դպրոցի հայոց լեզվի ամբիո-

Ծի վարիչ: Նա ֆրանսիական և Տուրիմի թագավորական ակադեմիաների անդամ էր, Պատվո Լեզեռնի շքանշանակիր:

Դյուլորեն իրավամբ ուներ Ֆրանսիայի ամենանշանավոր հայագետներից մեկի համբավը, անգնահատելի ծառայություններ է մատուցել հայ պատմագիտությանը և գրականությանը՝ Եվրոպայի և աշխարհի գիտական շրջաններին ներկայացնելով հայ պատմագրության հշանավոր հուշարձանները: Նրա կյանքն ու գործունեությունը հայագիտության անմնացորդ ծառայելու բնորոշ օրինակ է:

Այս տարի լրանում է Դյուլորեի մահվան 120-ամյակը: Սակայն նրա (ինչպես նաև Ֆրանսիայի մյուս հայագետների) գիտական ժառանգությունը Հայաստանում բավարար չափով ուսումնասիրված չէ: Հուսանք, որ 21-րդ դարում կլրացվի այս բացթողումը և նոր դարն ավելի արդյունավետ կլինի ընդհանուր հայագիտության այս կարևոր ասպարեզում ևս:

